ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՄՈՎՍԵՍ ՉԱՊԱՆՅԱՆԻ ԵՎ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՍՏԱՆԻՍԼԱՎ ՀԱԿՈԲՅԱՆԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (ԽԱՆՏԻ-ՄԱՆՍԻՅՍԿ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Մովսես Չապանյան և Ստանիսլավ Հակոբյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետի տեղակալ և թվայնացման վարչության գլխավոր մասնագետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Քաղաք Խանտի-Մանսիյսկ (Ռուսաստանի Դաշնություն), 2022թ. հունիսի 6-ից հունիսի 8-ը:

4. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն «ԲՐԻԿՍ, ՇՀԿ և ՀԱՊԿ անդամ երկրների մասնակցությամբ 13-րդ միջազգային SS ֆորում» համաժողովին (այսուհետ՝ Համաժողով):

5. **Հրավիրող կողմը.**

Համաժողովը կազմակերպված էր ՌԴ պետական դումայի անվտանգության և կոռուպցիայի կանխարգելման կոմիտեի, ՌԴ անվտանգության խորհրդի գրասենյակի, Խանտի-Մանսիյսկի ինքնավար մարզի կառավարության և «Ինֆոֆորում» տեղեկատվական անվտանգության ազգային ասոցիացիայի կողմից:

6. **Քննարկված թեմաները.**

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ներկայացուցիչները մասնակցել են համաժողովի պաշտոնական բացման արարողությանը, որը տեղի ունեցավ «Յուգրա-Կլասիկ» համերգային-թատերական կենտրոնում: Բացման խոսքով հանդես եկան Խանտի-Մանսիյսկի ինքնավար մարզի ղեկավար Նատալյա Կոմարովան, Սիերա-Լիոնե, Բենին, Գիանա և Նիկարագուա հանրապետությունների արտակարգ և լիազոր դեսպանները, Փարիզի ազգային համալսարանի պրոֆեսոր Անուրադա Կաննիգանտին և այլ բարձրաստիճան հյուրեր, ովքեր կարևորեցին ֆորումի դերը և նշանակությունը համաժողովի մասնակից երկրների մասնագետների, կազմակերպությունների, պետական կառույցների միջև նոր գործընկերային կապերի հաստատման, փորձի փոխանակման և կարողությունների զարգացման տեսանկյունից: Համաժողովը ուներ բավականին հագեցած օրակարգ և անցկացվում էր մի քանի սրահներում միաժամանակ: Նախարարության աշխատակիցները մասնակցել են «Անվտանգ տեղեկատվական երկիր-Անվտանգ աշխարհ», «Կիբեռանվտանգությունը թվային աշխարհում», «ՌԴ-Չինաստան, թվային տեխնոլոգիաներ և տեղեկատվական անվտանգության ապահովում», «Արհեստական բանականություն, տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերը», «Պետական ծառայությունների հասանելիությունը որպես կարևոր գործիք թվային հասունության համար», «Պետական տվյալների որակ» պանելային քննարկումներին և ռազմավարական նիստերին: Նախարարության աշխատակիցները հարց ու պատասխանի ժամանակ հղել են ոլորտային հարցեր փորձագետներին և մոդերատորներին: Համաժողովին զուգահեռ «Յուգրա-Էքսպո» ցուցահանդեսային կենտրոնում ընթանում էր տեխնոլոգիական ոլորտի ընկերությունների ապարատածրագրային լուծումների ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին «Գառդա», «Ատոլիս», «Պրայմ-Գրուպ», «Մասշտաբ», «Այ-Մոնիտորինգ», «Ֆորս», «Բաց դպրոց» թվային տեխնոլոգիական լուծումներ և անվտանգային համակարգեր մշակող և ներդնող կազմակերպությունները: Նախարարության ներկայացուցիչները ծանոթացել են ընկերությունների լուծումներին և փոխանակվել հետաքրքրող տեղեկատվությամբ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հունիսի 7-ին Յուգրա Էքսպո կենտրոնում տեղի ունեցող «Կիբեռանվտանգությունը թվային աշխարհում» ռազմավարական նիստի ժամանակ Նախարարության թվայնացման վարչության գլխավոր մասնագետ Ստանիսլավ Հակոբյանը ներկայացրեց «Տեղեկատվական անվտանգության նոր մարտահրավերները պետական կառավարման համակարգում» թեմայով զեկույց, որտեղ ներկայացվեց ՀՀ տեսլականը տեղեկատվական անվտանգության ոլորտում պետություն-մասնավոր հատվածի համագործակցության, կիբեռանվտանգության և տվյալագիտության կենտրոնների գործառույթների, տեղեկատվական անվտանգության ապահովման խոչընդոտների հաղթահարման եղանակների, տեղեկատվական անվտանգության կառավարման պլանի մասով, Հայաստանի թվայնացման կառուցվածքը և շրջանակը, ինչպես նաև ոլորտային վիճակագրություն իրականացված ԵՄ «ՍայբերԻստ» ծրագրի շրջանակներում: Համաժողովի անցկացման ընթացքում նախարարության ներկայացուցիչները առանձին հանդիպումներ ունեցան «Մեգաֆոն», «Ռոստելեկոմ», «Ատոլիս», «Ինֆոտեքս», «Ֆորս», «ՊՍՍ», «ՌՏ Լաբս», Ինտերակտիվ թվային «Բաց դպրոց» պլատֆորմ ընկերությունների, ՌԴ համակարգչային հանցագործությունների ազգային կոորդինացիոն կենտրոնի (НКЦКИ), Բելառուսի հանրապետության ոստիկանության «Կ» վարչության, Ղազախստանի հանրապետության պետական տեխնիկական ծառայության, Շանհայի համագործակցության կազմակերպության ահաբեկչության դեմ պայքարի դեպարտամենտի տեղեկատվական տեխնոլոգիաների ստորաբաժանման ներկայացուցիչների հետ քննարկվեցին համագործակցության եղանակներ, ձեռք բերվեցին հետագա փոխգործակցության պայմանավորվածություններ:

Համաժողովի ընթացքում բարձրացվեցին և քննարկվեցին պետական տեղեկատվական՝ այդ թվում կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների կիբեռպաշտպանության եղանակների, ծրագրային և ապարատային միջոցների սերտիֆիկացման, պետական տվյալների կառավարման ծառայությունների, տվյալների պաշտպանության միջոցների, սոցիալական ցանցերում տեղեկատվության վերահսկման մեխանիզմների և մշակված լուծումների, պետական ծառայությունների սահմանափակ կարողություններով անձանց համար հասանելիության ապահովման միջոցների, վերջիններիս նորմատիվային կարգավորման, ՏՏ կրթության զարգացման, ՌԴ շուկայում գործող ֆինտեխ լուծումների, Յուգրայի տարածաշրջանում գործող հասարակության սոցիալական պետական

պաշտպանության ծրագրային լուծումների, ինչպես նաև պետական տվյալների բացահայտման և կորզման եղանակների մասին: Համաժողովի բացման օրը Նախարարության ներկայացուցիչները հանդիպեցին նաև Խանտի-Մանսիյսկի ինքնավար մարզի դումայի պատգամավոր Էդգար Մակարյանի հետ, քննարկվեցին Յուգրայի տարածաշրջանի և Հայաստանի Հանրապետության միջև կրթության, սպորտի և տուրիզմի ոլորտներում փորձի փոխանակման ծրագրեր իրականացնելու հարցեր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Համաժողովի մասնակից պետական կառույցների, հատուկ ստորաբաժանումների և մասնավոր կազմակերպությունների հետ ձեռք բերվեցին պայմանավորվածություններ լավագույն փորձի փոխանակման, տեղեկատվության և օգտակար նյութերի փոխանցման, կիբեռանվտանգության ապահովման ոլորտում օպերատիվ կապի ապահովման և անհրաժեշտ փոխգործակցության ուժեղացման ուղղությամբ: Ներկայացված մի շարք կառույցների և ընկերությունների լավագույն փորձը նշանակալի օգտակարություն կարող է ունենալ Հայաստանի թվայնացման 2021-2025թթ. ռազմավարության միջոցառումների իրագործման փուլերում:

Համագործակցության առաջարկները դեռևս ստացման փուլում են, վերջնական ստացումից հետո կամփոփվեն և կներկայացվեն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ղեկավարության և շահագրգիռ գերատեսչություններին:

Նախարարության ներկայացուցիչների կողմից համաժողովին մասնակցությունը՝ տեղեկատվական անվտանգության ասպարեզում լավագույն փորձի ուսումնասիրության, նոր գիտելիքների ձեռքբերման և առկա մարտահրավերների հաղթահարման նոր հնարավորության հարթակ էր, որը ԲՐԻԿՍ, ՇՀԿ և ՀԱՊԿ անդամ երկրների, կենտրոնական մարմինների պատասխանատու ստորաբաժանումների հետ գործընկերային կապերի խթանման և նոր գաղափարների իրագործման տեսանկյունից ուներ մեծ նշանակություն: Համաժողովի ավարտից հետո պետական պատվիրակությունների համար անցկացվեցին մշակույթային և տուրիստական միջոցառումներ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Մովսես Չապանյան

Ստանսիսլավ Հակոբյան

13.06.2022թ.